

քա ն ա ս ի ք ա կ ա ն

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ


ՎԱՃԱՌՍԿԱՆՆ ՎԵՆԵՏԻԿ

Վերացուցեալ յԼ'գուիլէ կոյս զառագաստ
Գայր Լ'էտեացն այն քարոզ (1)
Որ անտառացն ընկերչակէ արքային ,
Սինչ ի հողմոյն վարեալ անգէտ նաւուղղին ,
Ի ծոց դանդաղ իմն եւ տըխուր լըճակի
Գնայր ի մոլոր զարտուղի
Ընդ կըղզեկաց խառնաշըփոթ ինչ բաւիղ ,
Ի գալ մերձել յափ կոյս նաւուն սըրբազան
Ընդ բընակիչ մի միայն ,
Թիւս ետ ճախրեաց ընդ այերս տեղ հաւքալաց
Յաւազանէն յուզելոյ :
Եւ Բարեպաշտն անդ ի նաւուն իւր խելաց
Գիտէր զկըղզիսն յերկարագոյն ի նըւագ .
Գուշակութեան շողաց ի սիրա իւր փայլակ .
Լսաց , եթէ՝ գայցէ օր
Օ ի մըթագին անդանօր ջուրցըն ընդ ձոր ,
Յաղթողական ինքն ըզդարձ
Ունէր առնել գերեզմանաւ վերամբարձ :
Բզբանսն ասաց 'ւ ահա ընդ շամբսն երեւէր
Բիւզանդական եկեղեցւոյ իմն ըստուեր ,
Որ ընդ եթերս ծածանելով ծածկեցաւ ,
Եւ ի գանգաց անդ յարձագանգս ընդ կամար
Հանդրին ափանցն անբարբառ
Սրացաւ գոչիւն անբաւ . “ Կեցցէ՛ սուրբ Սարկոս , , :
Ընդ հանգիցես , այո՛ , սակայն ' հովանի
Ոսկեզըմբէթ լուսապայծառ խորանի .
Ո՛վ երկնաւորդ , անդ հանգիցես , այո՛ , դուն
Լ'յլ շուրջ՝ անտառ սեանց փայլուն ,
Եւ արքունիդ քո ի կամարս օդասլաց
Փայլատակեալ շողասցին սլերճ եւ առոյգ
Կորընթացի խրոխտ նըժոյգք .
Ի քոյդ անուն , ապագայ երգ մարտավար ,
Վարանձաւաց ի խաւար
Ս'երժեսցին հէնք ժանտագործ (2)

(1) Ս . Մարկոս : Աւանդութիւն զոր յիշատակէ Սապէլիքոյ ի պատմ . վէնետ . գիրք Բ . Ա :

(2) Ուզբոքք , Դաղմատացիք , Լիբուռնեայք , և այլն :

Եւ ի դաշտաց մարտից ի խաղմ տրոփելոց
Պաղեստինու գերի վարեալ եկեցեն
Լրաբացի մահիկեղջիւրք բիւր այսրէն
Յոլալ ի մէջ քո լըճին .
Եւ յաշտարակս անդ ուխտանենդ Հելլենին
Կոյր ոմն ի վեր ելցէ ծեր (1)
Որ զպատերազմ նրկատէր ,
Ըզդրօշ քոյին պատառատուն ի փառաց
Տընկել ի մէջ թըշնամեաց ,
Վայցեն արքայք ի դաւառաց բացածիդ
Օազատուհիսդ առնուլ ի կին գեղեցիկ (2) .
Եւ ընդ մօրուտ յայդ ճահիճ
Ի գարշ մամուռ ելցեն ի վեր հրաշալիք
Լմբարտակաց՝ որ այլ ուրեք ոչ տեսան .
Եւ յայդ կըղզեաց մերկութեան
Եւ ի ծոցոյ դիւթականացդ յայդ խեցեաց
Ելցեն ակունք ամենապերճ ընտանեաց :



Եւ ի նախկին անդ ի ծագել լուրջ այգուն
Կորածընունդ այս դարուց ,
Յոլորտապտոյտ ջըրադարձից իւր մեկնեալ ,
Ի Տըրումնս՝ կազմեալս նոճեացն ի բընիկ (3)
Եւ ի կայտառ վերելակէր իւր նաւկնեար
Կանխայարոյց Վենետիկ ,
Սինչ նախանձորդք իւր դեռ ի քուն լինէին .
Եւ գեղեցիկ յարշալուսոյն անդ գաւառս
Վաջայանդուգըն թանգար՝
Օազնըւական իւրոց որդեացն ուղղէր լաստ
Վանձուց ի գիւտ՝ բարեբաստ .
Ընդ ոմն այսրէն առնէր դարձ
Ընդ իւր բերեալ բազմաբեղունն ի Հընդկաց
Ը ի թ զարտասուաց քաղցրաբոյր
Օոր մըշտահոս կընդրըկենին տայ տըխուր ,
Կամ ըզհատեալ կինամոնին ըզկեղեւ
Վափնեստանեայց Վանգիսի .

(1) Հենրիկոս Տանտոլոյ մեծահամբաւ դուքս Վենետիկոյ : Իննսուն ամաց էր , և աչք նորա կաթեալ էին յորժամ գոյզն ջոկատու զօրաց եհար զՄարծուլք կայսր հռոմոց և էառ զկոստանդնուպոլիս :

(2) Մի է ի սոցանէ և Կատարինէ Գոռնարոյ կին Յակովբայ Լուսինեան արքայի Կիպրոսի և Երուսաղեմի , որ Թագոհի հայոց ևս կոչեալ , իրաւամբք ազգակցութեանն ընդ Լէոն 2 : Ի համառօտախօս տապանադրի նորա չարարաւ զանց յիշել և զայս պատիւ դշխոյին .

D. O. M.

CATHARINAE CORNELIAE CYPRI, HIEROSOLIMORUM
AC ARMENIAE REGINAE
CINERES.

(3) Dromouի հին նաւք վենետիկեցւոց յօրինեալք ի նոճեաց անտի որով լի էին կղզիք իւր :

Եւ իմն առնոյր ըզպաստաւ
 Որ անդ ի դրախտս հիւսեալ հովտաց Վաշմիրի ,
 Կամ ըզպարսիկ օթոցս , եւ զասր ոսկեփայլ
 Յանկիւրիոյ՝ ի մըրըրկաց խեռ թափեալ
 Ելէսպոնտեայ , որոյ յաճախ բուռն ալիք
 Ի ցանկուծիւն ապառուժ
 Ըզդիակունս եւ սուգ առնուն խաղալիկ .
 Սըտարանդի ի Կոլքոնտայ անդամանդ ,
 Ուր հիւծանին պայատէրա (1) սիրախանդ ,
 ԸլՌիալդոյ (2) յիւր ցոլ ըզշուքն յաւելոյր ,
 Եւ մաքրափայլն անդ յակինթ
 Իբրու արեան ինչ քարացեալ կարմիր շիթ
 Պաղպաղելով ըզսեալ վարսիւք ծիծաղէր
 Սէնեակուհեացն տիկնանց
 Եւ արդ դարուց որոց վըտանգն էր մեծանձն
 Յաջորդեցին հեշտուծիւն ,
 Նուռնդք անաւագ , պերճուծիւն ,
 Պալատք , պարապք , բարեկենդանք , եւ մեղկ քուն : —
 Իայց եւ անդուստ զդէմն յԱրեւելս հաստատեալ
 Յամալֆիդեան ձիթենաջով բըրբակաց
 Յառաւօտուն անդ ի նոյն
 Հաստաբազուկ իմն իջանէր մանկուծիւն
 Օէնք յուս , եւ երգ ի բերան ,
 Ելիք հանդէպ անսահման ,
 Եւ անվըկանդ արիուծիւն ի սըրտին :
 Սինչ հարց նոցուն միտք խորին
 ()րէնս ի գիր հարկանէին իմաստուն
 Որ զթողովուրդն զայն ուղղէր ծովայած (3)
 Ընորհելով նաւաստեաց
 Ի կառավար նաւուց նոցին թըռչանաց
 Օհաւատարիմն ի բեւեռին սէր ըզսլաք (4)
 Որպէս զի՝ սեաւ ժամանակ
 Սինչ փոթորիկն մոլեգնի գիշերի
 Օղողեալ աստեղ ցոլից լըցցէ նա զթերի :

ԱԼԷԱՐՏՕ ԱԼԷԱՐՏԻ *

- (1) Bajadera ի լիւսիտանացի բարբառ զգուսանս նշանակէ պարերգուս յարեւելեան Հնդկիս :
 (2) Մեծագործ կամուրջ ի Վենետիկ :
 (3) Օրէնք կամ Տախտակք ամալֆիդեան :
 (4) Զբեւեռացոյցն ծանօթացոյց կամ հնարեաց (ըստ ոմանց) Ֆ . Ճիօյիա ամալֆիդանացի :
 * Ի քերթուածոյն *Le antiche città italiane marinare e commercianti*.